

ԱԶԳԱՅԻՆ ԺԵՍՏԵՐԻ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դաշյան Ա.Վ.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ազգային ժեստերի լեզուներ, հայական ժեստերի լեզու, եկլեզու ուսուցում, ժեստերի բառարաններ:

Մարդիկ միշտ ապրել են և շարունակում են ապրել հասարակության մեջ: Հասարակական կյանքը և կոլեկտիվ գործունեությունը մարդկանց միջավայրում առաջացրել են միմյանց հետ հաղորդակցվելու պահանջ և անհրաժեշտություն: Այդ հաղորդակցումը լիակատար ձևով իրականացվում է խոսքի օգնությամբ, որի միջոցով միմյանց փոխանցում են բազում մտքեր, գիտելիքներ և պատմում են իրենց ապրումների ու իղձերի մասին:

Մարդկային հասարակության մեջ միշտ եղել են չսող մարդիկ, որոնք հաղորդակցվել են ժեստերով:

Ժեստերի լեզուների գիտական հետազոտությունների սկիզբը դրվեց XX-րդ դարի 1960 թ-ից ԱՄՆ-ում՝ հոգելեզվաբան Վ.Ստոկուի կողմից: Նա կարողացավ ապացուցել, որ ժեստերի լեզուն լիարժեք և բարդ լեզվական համակարգ է՝ իրեն բնորոշ ինքնատիպ քերականական կառուցվածքով՝ ձևաբանությամբ և շարահյուսությամբ: Եվրոպայում (Շվեդիայում, Ֆրանսիայում, Ֆինլանդիայում, Ռուսաստանում և այլուր) այս ոլորտի մաս-

նագետները (M. Brennan, 1981; K. Hyltenstam, 1989 Չ. Չայցլան) նշում էին, որ գոյություն ունեն ազգային ժեստերի լեզուներ, որոնք տարբերվում են միմյանցից բառապաշարի ինքնատիպությամբ և քերականական կառույցով (1):

Տարբեր երկրների չսող մարդկանց միջև հաղորդակցումը պարզեցնելու նպատակով ստեղծվեց նաև միջազգային ժեստերի լեզու՝ «Ժեստունո»:

Հայաստանում ժեստերի լեզվի և մատնախոսության մասին առաջին գիտական հոդվածը հրապարակվել էր 1973 թ Վ.Գ. Խալաթյանի կողմից:

Հայկական ժեստերի լեզվի ուսումնասիրությունները իրականացվում էին ինչպես կրթական հաստատություններում (Աբովյանի անվան ՀԴՄՀ, լսողության խանգարում ունեցող երեխաների կրթահամալիր), այնպես էլ հասարակական կազմակերպությունների կողմից (սկսած 1999 թվականից):

Լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում 2000 թվականից ժեստերի լեզուն ներդրվեց որպես նախափրական առարկա:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դոցենտ Վ. Խալաթյանի ղեկավարությամբ և դասախոս Ա. Դաշյանի կողմից 2000 թվակա-

նից սկսվեցին հայկական ժեստերի լեզվի գիտական ուսումնասիրությունները, որոնց արդյունքները զետեղվել են գիտամեթոդական ժողովածուներում (2): 2013 թ. հրապարակային պաշտպանության ներկայացվեց «Ժեստերի լեզուն՝ որպես խուլերի հաղորդակցման և ուսուցման միջոց» Ա.Դաշյանի ատենախոսությունը: Ուսումնասիրության և վերլուծության արդյունքներից պարզ դարձավ, որ հայերեն ազգային ժեստերի լեզուն բավականին տարբերվում է այլ ժեստերի լեզուներից. այն ունի ինքնատիպ և հարուստ բառապաշար, ամբողջովին բավարարում է լսողության խանգարում ունեցող հայ անձանց հաղորդակցական պահանջները: (3)

Դոցենտ Վ. Խալաթյանի ղեկավարությամբ «Կամբ և Կորով» երիտասարդ հաշմանդամների հասարակական կազմակերպությունում ուսումնասիրվեցին երկլեզու ուսուցման համաշխարհային փորձը, կազմակերպվեցին դասընթացներ, որոնք իրականացվում էին ժեստաբառային երկլեզու մեթոդով:

Լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի առաջին դասարանում 2005-2007թթ. սկսվեցին երկլեզու ուսուցման մեթոդի ներդրման փորձարարական աշխատանքները: Փորձարարական աշխատանքների դրական արդյունքները համարվելիս 2007 թ. կրթության և գիտության նախարարության կողմից հայկական ժեստերի լեզուն պետական ուսումնական պլանում ներդրվեց որպես պարտադիր ուսումնական առարկա: Հաստատվեց նաև ժեստաբառային երկլեզու ուսումնական ծրագիրը, որով հա-

տուկ դպրոցում առաջնորդվում են առաջուր:

2006 թ ձայնագրվել է «Իմ սիրած հեքիաթները ժեստերի լեզվով» տեսաերիզը: Այն նախատեսված է նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի՝ լսողության խանգարումով երեխաների համար: Հեքիաթի պատմվում էր ժեստերի լեզվով: Այնուհետև տրվում էին թեմատիկ նկարներ և բառային տեքստ: Տեսաերիզի ստեղծման նպատակն էր՝ ձևավորել երեխաների հեքիաթների բովանդակություն ինչպես ժեստերի, այնպես էլ բառային լեզվով ընկալելու կարողությունը:

Վերջին տարիներին մեծ ուշադրություն են դարձնում նաև ժեստերի լեզվի բառարանների ստեղծմանը: Առաջին համառոտ ժեստերի լեզվի բառարանը հրատարակվեց 2001 թ Վ.Խալաթյանի կողմից:

Օքսֆամ բրիտանական հասարակական կազմակերպության հովանավորությամբ և Վ. Խալաթյանի ղեկավարությամբ 2004թ ստեղծվեց և հրատարակվեց «Խոսող ձեռքեր հայկական ժեստերի լեզվի բառարանը» (4): Ուշագրավ է այն փաստը, որ բառարանի ստեղծման աշխատանքներին լսող մասնագետների հետ միասին մասնակցել են նաև չլսողները: Բառարանը նախատեսված է լսողության խանգարումով երեխաների, նրանց ծնողների և ուսուցիչների միջև հաղորդակցումը դյուրին դարձնելու համար: Այժմ այդ բառարանը որպես ժեստերի լեզվի ուսումնական ձեռնարկ է գործածվում նաև հատուկ կրթահամալիրում և ՀԴՄՀ-ի հատուկ կրթության ֆակուլտետում:

Զլսող մարդկանց հոգևոր դաս-

տիարակության նպատակով Տեր Եսայու և 2.Մելիքյանի նախաձեռնությամբ 2007թ. հրատարակվել էր հայկական ժեստերի լեզվի հոգևոր բառարանը:

Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի դասախոս Սուրեն Ղարազյոզյանի ղեկավարությամբ և նրա սաների կողմից 2012-ին ստեղծվել է նաև ժեստերի լեզվի համակարգչային հայ -անգլերեն բառարանը: Այն օգտագործողին տալիս է ընտրված բառի թարգմանությունը անգլերեն կամ հայերեն լեզվով ստանալու հնարավորություն, ինչպես նաև համապատասխան ժեստերի պատկերներով տեսնելու տվյալ բառը և նրա թարգմանությունը: Բառարանում ընդգրկված են առաջնային հաղորդակցման համար անհրաժեշտ ավելի քան 300 հայկական ժեստեր, որոնք ուղեկցվում են համարժեք ամերիկյան ժեստերով, հայերեն և անգլերեն թարգմանություններով և պատկերներով:

«Հայ-ֆրանս գարգացման հիմնադրամ» հասարակակա կազմակերպության կողմից 2013 թվականին ստեղծվեց նաև հայկական ժեստերի լեզվի տեսաբառարանը, որը տեղադրված deaf. am կայքում:

2012 թվականի ծրագրերի մեջ ներառված են նաև ժեստերի լեզվի թարգմանիչների (սուրդո-թարգմանիչների) մասնագիտացված պատրաստումը: Սա կարևորագույն խն-

դիրներից մեկն է, որն անհապաղ լուծում է պահանջում: Բոլոր չլսող անձինք տարբեր ոլորտներում՝ բժշկական, իրավաբանական, դատական, կրթական, ունեն ժեստերի լեզվի թարգմանիչների կարիք: Որակյալ թարգմանիչների առկայությունը կօգնի լուծել չլսողների հուզող կենսական և սոցիալական մի շարք հարցեր:

Ժեստերի լեզվի ուսուցման նպատակով հրատարակվել է «Հայկական ժեստերի լեզվի ուսուցման մեթոդիկա» (Ա.Վ.Դաշյան) ուսումնամեթոդական ձեռնարկը, որը 2013 թվականից հաջողությամբ կիրառվում է հատուկ կրթության ֆակուլտետում:

Հրապարակվել է նաև «Չլսողների խոսքի և հաղորդակցման զարգացումը ժեստաբառային երկլեզու ուսուցման մեթոդով» ուսումնամեթոդական ձեռնարկը (Ա.Վ.Դաշյան), որում պարունակվում է նաև են դիմախաղի և շարժումների արտահայտչականությանը, երկու հաղորդակցման համակարգերի՝ ժեստերի և բառային խոսքի բառապաշարի, կապակցված խոսքի զարգացմանը ուղղված խաղեր, վարժություններ և առաջադրանքներ:

Հայկական ժեստերի լեզվի ուսումնասիրությունների և նրանց հետ կապված հետազոտական աշխատանքները շարունակական են, առջևում կան շատ հետաքրքիր ծրագրեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դաշյան Ա.Վ. Ժեստերի լեզվի ձևավորումն ու զարգացումը խուլների հաղորդակցման գործունեության ընթացքում://Հա-

տուկ մանկավարժություն և հոգեբանություն գիտամեթոդական ձեռնարկ: Չանգակ, 2003. - էջ 28-31:

2. Խալաթյան Վ.Գ., Չ.Մելիքյան, Խոսող ձեռքեր: Հայկական ժեստերի լեզվի բառարան: // Ոսկան Երևանցի հրատ: Երևան, 2004:
3. Зайцева Г.Л. Дактилология. Жестовая речь. Учеб. пособие для студ. Дефект. Фак. Пед. Инст-ов. М. „ Просвещение”.2000, 218с.
4. Жесты как основное средство общения глухих. Специальная педагогика и психология // Сборник научно-методических статей. Ереван. Зангак-. 2003. С.70-73.

РЕЗЮМЕ

ИССЛЕДОВАНИЯ НАЦИОНАЛЬНОГО ЖЕСТОВОГО ЯЗЫКА В АРМЕНИИ

Дашьян А.В.

Ассистент кафедры специальной пеадагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук

В статье представлены работы по изучению и исследованию национального жестового языка Армении. Представлены также работы

по созданию армянских жестовых словарей и методических сборников по изучению жестового языка.

SUMMARY

NATIONAL SIGN LANGUAGE RESEARCH IN ARMENIA

Dashyan A.

Assistant Chair of Special Pedagogy and Psychology Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Candidat of Peadagogigal Sciences

The article contains some works on the study and research of the national Armenian sign language. It also includes some works on the

creation of Armenian sign dictionaries and methodological collections on the study of sign language.